

# «ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳ ԵՎ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՋ

Մարինե Սկրտչյան  
Արմենուհի Մարտիրոսյան  
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածը նվիրված է դիվանագիտական արարողակարգի բառապաշարի յուրացման առանձնահատկություններին: Այն ներկայացնում է վարժությունների տարբեր տեսակներ, որոնք նպաստում են դիվանագիտական արարողակարգին բնորոշ լեզվական առանձնահատկությունների ընկալմանն ու յուրացմանը: Հոդվածում ներկայացված վարժություններն ուսանողին հաղորդում են ոչ միայն արժեքավոր տեղեկատվություն, այլև նպաստում են դիվանագիտական արարողակարգի շրջանակներում օգտագործվող նոր բառերի ու բառակապակցությունների յուրացմանը:

**Բանալի բառեր.** դիվանագիտական լեզու, դիվանագիտական արարողակարգ և վարվեցողություն, լեզվաոճական առանձնահատկություններ, ուսուցման մեթոդներ:

## Ներածություն

Ինչպես ցանկացած մասնագիտական լեզու, այնպես էլ դիվանագիտական լեզուն ունի իր առանձնահատկությունները, նրբությունները, որոնց տիրապետումը համարվում է յուրաքանչյուր ապագա դիվանագետի կարևորագույն խնդիրներից մեկը: Տվյալ հոդվածում մենք փորձելու ենք նկարագրել դիվանագիտական արարողակարգի շրջանակներում օգտագործվող անգլերենին բնորոշ լեզվական և ոճական առանձնահատկությունները: Քանի որ միջազգային հանրության կողմից կիրառվում են արարողակարգային միևնույն կանոնները, ուստի յուրաքանչյուր ապագա դիվանագետ պարտավոր է իմանալ արարողակարգին և վարվեցողությանն առնչվող տերմինները և բառապաշարը, և դրանք կիրառել դիվանագիտական գործունեության մեջ:

«Դիվանագիտական արարողակարգ և վարվեցողություն» ուսումնական ձեռնարկը նախատեսված է միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների, սկսնակ դիվանագետների, ինչպես նաև դիվանագիտությամբ հետաքրքրվող լայն շրջանակի համար: Տվյալ ձեռնարկում փորձ է արվում ներկայացնելու դիվանագիտական արարողակարգի և վարվեցողության նրբությունները, ինչպես նաև ամրապնդելու դիվանագիտական արարողակարգին առնչվող լեզվական գիտելիքները:

**«Դիվանագիտական արարողակարգ և վարվեցողություն» ուսումնական ձեռնարկի կառուցվածքը և դասավանդման մեթոդները**

Ձեռնարկը բաղկացած է 14 հիմնական դասերից, որոնցում ներառված են հետևյալ թեմաները.

1. «Արարողակարգի դերը դիվանագիտության մեջ»: Միջազգային ասպարեզում խիստ կարևոր է արարողակարգային կանոնների պահպանումը: Արարողակարգային կանոնների ցանկացած անզգույշ խախտում կարող է բերել լուրջ հետևանքների միջազգային հարաբերություններում: Այս գլխի նպատակն է ուսանողին սովորեցնել արարողակարգին և վարվեցողությանն առնչվող բառապաշարը և լեզվաոճական առանձնահատկությունները:

2. «Դիվանագիտական հարաբերությունների հաստատում»: Քանի որ տվյալ գործընթացը պահանջում է դիվանագիտական փաստաթղթերի կազմում, դիվանագետը պետք է լիարժեք տիրապետի պաշտոնական փաստաթղթերի լեզվաոճական առանձնահատկություններին և տեխնիկական նրբություններին:

3. «Դեսպաններ» գլխում մանրամասն նկարագրվում են դեսպանների պարտականությունները, դեսպանների տեսակները, ագրեմանը և հավատարմագրերի հանձնման ընթացակարգը: Սույն գլխում նաև ներկայացվում է դեսպանների և դիվանագետների պարտականությունների տարբերությունները և նմանությունները, համակողմանիորեն դիտարկվում է դիվանագետների դասակարգումը ըստ իրենց տիտղոսների:

4. «Դիվանագիտական կորպուս» գլուխը ներկայացնում է դիվանագիտական կորպուսի կառուցվածքը, դուայենի նշանակման կարգը և նրա պարտականություններն ու գործառույթները:

5. «Հյուպատոսություններ և հյուպատոսական հիմնարկներ» գլուխը մանրամասն անդրադառնում է հյուպատոսների իրավունքներին և պարտականություններին:

6. «Դիվանագիտական անձեռնմխելիություն» գլխում քննվում է դիվանագիտական անձեռնմխելիությունը որպես միջազգային իրավունքի նորմերի տեսանկյունից ամենագլխավոր իմունիտետ և նշվում է իմունիտետների և արտոնությունների կարևորությունը միջազգային գործունեության մեջ:

7. «Դիվանագիտական հարաբերությունների խզում» գլխում նշվում են դիվանագիտական հարաբերությունների խզման պատճառները և առիթները, խոսվում է նաև բոլոր հնարավոր հետևանքների մասին, որոնց հանգեցնում է դիվանագիտական հարաբերությունների խզումը:

8. «Արարողակարգի բաժին» գլուխը նկարագրում է Արարողակարգի Ծառայության պարտականությունները:

9. «Ավագության Կարգը» բաժինն անդրադառնում է դիվանագիտության մեջ ավագության կարգին: Հրամայական պահանջ է հետևել ավագության կարգին, որի անտեսումը կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների:

10. «Տիտղոսներ և դիմելածներ» գլուխը վերաբերում է տիտղոսներին, դիմելածնի կանոններին, որոնք օգտագործվում են միջազգային ասպարեզում: Այս գլուխն ապագա դիվանագետին ծանոթացնում է միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունքների հետ, այն է՝ ինչպես պետք է դիմել դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներին, պետությունների ղեկավարներին, պետական քաղաքական և կրոնական հայտնի գործիչներին, հյուպատոսներին և այլ բարձրաստիճան պաշտոնյաներին:

11. «Պաշտոնական այցեր»: Այս գլխում ներկայացվում են այցերի տեսակները, որոնք կարևոր նշանակություն ունեն պետությունների միջև հարաբերությունների զարգացման և ամրապնդման համար:

12. «Բլեյր Հաուս»: Առանձին գլուխ է նվիրված Բլեյր Հաուսին, որն օտարերկր-

յա բարձրաստիճան պաշտոնյաների համար նախատեսված հյուրերի տունն է ԱՄՆ-ում: Ներկայացվում են հետաքրքիր տեղեկություններ՝ կապված Բլեյր Հաուսի պատմության հետ, ինչո՞ւ է այն անվանվել ի պատիվ Բլեյր ընտանիքի, և արդ՞յո՞ք այն ի սկզբանե նախատեսված է եղել որպես պաշտոնական նստավայր:

13. «Պաշտոնական ընդունելություն» գլուխն անդրադառնում է դիվանագիտական ընդունելություններին, քանի որ այդ ընդունելությունները նպաստում են պետությունների, արտաքին գործերի նախարարությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների, դիվանագետների միջև կապերի հաստատմանը, զարգացմանը և բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը:

14. «Դրոշի հետ կապված արարողակարգ»: Այս գլուխը նվիրված է ազգային դրոշի դերին պաշտոնական տարբեր արարողությունների ժամանակ, որոշակի պատմական տեղեկատվություն է ներկայացնում տարբեր երկրների դրոշների պատմության կարևորության մասին:

Լեզվական գիտելիքների յուրացումը հիմնականում իրականացվում է վարժությունների տեսքով: Վարժությունների տարբեր առաջադրանքները միտված են յուրացնելու և ամրապնդելու արդեն իսկ հիմնական տեքստերից ձեռքբերված գիտելիքները: Տեքստի և բառապաշարի ընկալմանը նվիրված մի շարք վարժություններ միտված են ամրապնդելու տեքստում գործածվող նոր բառերն ու բառակապակցությունները: Ուսանողին առաջարկվում է տեքստում գտնել վարժության մեջ տրված հայերեն բառակապակցությունների անգլերեն համարժեքները:

Տվյալ ձեռնարկը առաջարկում է ուսանողին վարժություններ՝ հետաքրքիր սկզբունքով. այսպես, տեքստում օգտագործված բառը ներկայացված է իր երկու իմաստներով: Ուսանողի խնդիրն է գտնել այն համարժեք իմաստը, որն օգտագործված է տեքստում: Օրինակ՝

**to assign** – 1. to give out or allot (a task, a problem, etc.)  
2. to select for and appoint for a post

**to appoint** – 1. to equip with necessary or usual features, to furnish  
2. to assign officially, as for a position, responsibility, etc.

**to draw** – 1. to extract or pull or take out  
2. to derive or formulate

**to shape** – 1. to mould into a particular pattern or form; to modify  
2. to plan, devise or prepare

**resolution** – 1. settlement, regulation  
2. a judicial decision on some matter; verdict.

Ուսանողին առաջարկվում է ևս մեկ հանձնարարություն որը, լինելով տեղեկատվական բնույթի տեքստ, ներկայացվում է վարժության տեսքով: Տեքստում բաց են թողնված որոշակի քանակությամբ բառեր և բառակապակցություններ, և ուսանողին հանձնարարվում է տեղադրել բառերն ու բառակապակցությունները համապատասխան ձևերով՝ օգտվելով տեքստին կից ներկայացված բառերի և բառակապակցությունների շարքից: Տվյալ վարժության օրինակ կարող է լինել Types of Ambassadors (Դեսպանների տեսակներ) տեքստը, որն ուսանողներին ծանոթացնում է դեսպանների տեսակների և նրանց միջև եղած տարբերությունների հետ:

*Types of Ambassadors*

1) \_\_\_\_\_ is a diplomat of the highest rank and/or a minister who is accredited to represent his country. But unlike the resident ambassador (who is usually limited to a country) and/or embassy, the \_\_\_\_\_ is entrusted to operate in several usually neighbouring countries, a region or sometimes a seat of international organizations such as the United Nations or the European Union.

2) A(n) \_\_\_\_\_ is one heading a permanent diplomatic mission, for instance the senior professional diplomat in an embassy. 3) A(n) \_\_\_\_\_ could be appointed for special purposes or for an indefinite term; politically appointed ambassadors would fall under this category. Ordinary Ambassadors and non-plenipotentiary status are rarely used, although they may be encountered in certain circumstances.

4) A(n) \_\_\_\_\_ is one who resides within the country to which he or she is accredited. 5) A(n) \_\_\_\_\_ is one who does not reside within the country to which he or she is accredited, but lives in a nearby country. Thus, a resident ambassador to a country might at the same time be a non-resident ambassador to several other countries. ...

**(Non Resident Ambassador, Nuncios, Ambassador Extraordinary and Plenipotentiary, Ordinary Ambassador, Resident Ambassador, Ambassador-at-large, Extraordinary Ambassador, High Commissioners)**

Տեքստի բառապաշարի յուրացմանը նպաստում է նաև մեկ այլ վարժության տեսակ, որտեղ ուսանողին տրվում են տեքստում օգտագործված բառերի հոմանիշները և նրանից պահանջվում է գտնել դրանց համարժեքները, օրինակ՝

*Most ambassadors are accompanied to their **postings** by their spouses. Although an ambassador's duties are many and **varied**, there is no "position description" for the ambassador's spouse. The spouse's role is **crucial** to the ambassador's success. A spouse **provides** an **extra** pair of eyes and ears to help the ambassador **take in** all that is going on and an alter ego when the ambassador cannot **attend** two functions at the same time. In the broadest **sense**, the spouse is to support the ambassador in promoting his or her government's interest and foreign policy. Generally, this means **running** the official residence, ensuring that the household staff functions effectively and efficiently, ensuring that the house and grounds are well maintained, and hosting a **multitude** of events from **intimate** dinners for elite groups to receptions for hundreds.*

appointment \_\_\_\_\_

multifarious \_\_\_\_\_

critical \_\_\_\_\_

to equip, to furnish \_\_\_\_\_

additional \_\_\_\_\_

to comprehend \_\_\_\_\_

to be present \_\_\_\_\_

meaning \_\_\_\_\_

to be in charge of \_\_\_\_\_

a large number \_\_\_\_\_

private \_\_\_\_\_

Այս վարժությունը նպաստում է ուսանողի բառապաշարի ընդլայնմանը և հոմանիշների օգտագործմանը համատեքստին համապատասխան: Որպես տնային աշխատանք դասախոսը կարող է հանձնարարել ուսանողին գտնել ոչ միայն հավելյալ հոմանիշներ, այլև հակահիշներ:

Ուսանողների բառապաշարի ընդլայնմանը նաև նպաստում է հետևյալ տեսակի վարժությունը, որտեղ նա տեքստում պետք է գտնի տրված բացատրություններին համապատասխան բառերը, ինչպես օրինակ՝

*a positive declaration intended to give confidence; a promise \_\_\_\_\_*  
*the giving of an ability; enablement or permission \_\_\_\_\_*  
*to make sharper or more focused or efficient \_\_\_\_\_*  
*to make determined efforts to deal with (a problem or difficult task) \_\_\_\_\_*  
*absolutely necessary; essential \_\_\_\_\_*

*The Jewish Diplomatic Corps (JDCorps) is a worldwide, non-partisan network of diplomatic innovators advancing Jewish interests in international affairs.*

*JDCorp's vision is the **assurance** of a safe, secure, and prosperous world on behalf of the Jewish people and humanity as a whole. The JDCorps is realizing this vision through the **empowerment** of a new generation of outstanding young Jewish professionals acting in the fields of diplomacy and public policy.*

*Founded in 2009, the JDCorps has been providing a unique service to world Jewry, in particular by actively enabling some of the most promising young lay leaders. These Jewish Diplomats (JDs) participate in the diplomatic arena, enabling them **to hone** their skills at global diplomacy while **tackling** issues **vital** to the Jewish people.*

Կարևոր է նաև ուսանողի մոտ զարգացնել դիվանագիտական արարողակարգին առնչվող հայերեն տեքստերը հայերենից անգլերեն վերարտադրելու հմտությունը: Գրքի յուրաքանչյուր գլուխ ընդգրկում է տվյալ գլխի թեմային համապատասխան բառապաշարով թարգմանություն (հայերենից անգլերեն, անգլերենից հայերեն), որը դասախոսին հնարավորություն է տալիս ստուգելու ուսանողի բառապաշարի յուրացումը, օրինակ՝

**ՀԱՍՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Երկու երկրների ժողովուրդների շահերի և ակնկալումների համապատասխան, Չինաստանի ժողովրդական Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշեցին հաստատել դիվանագիտական հարաբերություններ երկու պետությունների միջև դեսպանների մակարդակով և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ 1992թ. ապրիլի 6-ից:**

**Երկու երկրների կառավարությունները համաձայնության եկան զարգացնելու բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը երկու երկրների միջև ինքնիշխանության և տարածքային ամբողջականության փոխադարձ հարգման, փոխադարձ չհարձակման, միմյանց ներքին գործերին չմիջամտելու,**

հավասարության և փոխշահավետության, ինչպես նաև խաղաղ գոյակցության սկզբունքների հիման վրա:

Ձեռնարկում ներկայացված է վարժության մեկ այլ տեսակ՝ Matching (գտնել համապատասխան բացատրություն), որի հիմնական նպատակն է ուսանողին սովորեցնել տեքստում առկա նոր բառերն իրենց անգլերեն բացատրություններով: Օրինակ՝

1. consulate	a) an official appointed by a government to reside in a foreign country and represent his or her government's commercial interests and assist its citizens there
2. consul general	b) a consul of one of the lower grades
3. consular agent	c) the building in which a consul's duties are carried out
4. consul	d) a consul of the highest grade, usually stationed in a city of considerable commercial importance

Սույն ձեռնարկը վարժության տեսքով ներկայացնում է Վիեննայի Կոնվենցիայի որոշ հոդվածներ, որտեղ որոշ բառեր և բառակապակցություններ տրված են հայերեն տարբերակով, իսկ հոդվածին կից՝ դրանց անգլերեն համարժեքները: Այստեղ ուսանողից պահանջվում է գտնել համապատասխան բառը կամ բառակապակցությունը և տեղադրել այն: Այս բառապաշարը հնարավորություն է տալիս ուսանողին ընկալելու և ճիշտ օգտագործելու միջազգային պայմանագրերի, կոնվենցիաների իրավապայմանագրային լեզուն: Օրինակ՝

Article 3  
*The functions of a diplomatic mission consist* **մասնավորապես**  
 \_\_\_\_\_ *in:*  
 \_\_\_\_\_ *representing the sending State in the* **նստավայր պետությունում**  
 \_\_\_\_\_;  
 \_\_\_\_\_ *protecting in the receiving State the interests of* **հավատարմագրող պետության** \_\_\_\_\_ *and of its nationals,*  
**թույլատրելի շրջանակներում** \_\_\_\_\_ *by inter-*  
*national law;*  
 \_\_\_\_\_ *negotiating with the Government of the receiving State;*  
**պարզել բոլոր օրինական միջոցներով**  
 \_\_\_\_\_ *conditions and developments in the receiv-*  
*ing State, and reporting thereon to the Government of the sending State;*  
 \_\_\_\_\_ *promoting friendly relations between the sending State and the receiving*  
*State, and developing their economic, cultural and scientific relations.*  
 \_\_\_\_\_ *Nothing in the present Convention* **չպետք է մեկնաբանվի**

\_\_\_\_\_ as preventing the performance of consular functions  
by a diplomatic mission.

*(within the limits permitted, receiving State, inter alia, of the sending State, shall be construed, ascertaining by all lawful means).*

### **Եզրակացություն**

Այսպիսով, «Դիվանագիտական արարողակարգ և վարվեցողություն» ուսումնական ձեռնարկը ծանոթացնում է ապագա դիվանագետներին արարողակարգի և վարվելակերպի պահպանման սկզբունքներին և այդ ոլորտում օգտագործվող բառապաշարի նրբություններին, որոնք ամրապնդվում են բազմաբնույթ վարժությունների միջոցով:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Մկրտչյան, Մ.; Մարտիրոսյան Ա. (2013) *Դիվանագիտական Արարողակարգ*. Երևան: ԵՊՀ հրատարակչություն:
2. Չալըմյան, Ն. (2003) *Դիվանագիտական Արարողակարգ և Վարվելակերպ*. Երևան: Տոներ հրատակչություն:
3. Չալըմյան, Ն. (2003) *Դիվանագիտական և Հյուպատոսական Ծառայություն և Իրավունք*. / Ուս. ձեռնարկ. Երևան:
4. Berridge, G.R. and James, A. (2001) *A Dictionary of Diplomacy*. New York: Palgrave.
5. Bremner, M. (1994) *Modern Etiquette*. New Jersey.
6. Feltham, R.G. (1998) *Diplomatic Handbook* (7<sup>th</sup> edition). London and New York: Longman.
7. Wood, J.R. and Serres, J. (1970) *Diplomatic Ceremonial and Protocol: Principles, Procedures and Practices*. New York.
8. McCaffree, M.J. and Innis, P. (2002) *Protocol: The Complete Handbook of Diplomatic, Official and Social Usage* (25<sup>th</sup> Anniversary Edition). Washington, D.C.: Devon Publishing Company.

### **Некоторые аспекты преподавания дипломатического протокола на английском языке**

Статья посвящена некоторым методам преподавания языка дипломатического протокола на факультете международных отношений ЕГУ. Данная работа вкратце описывает некоторые виды упражнений, которые не только информативны по своему содержанию, но также способствуют усвоению слов и выражений, используемых в данной области.

### **On Some Aspects of Teaching the Language of Diplomatic Protocol in English**

The article refers to some teaching methods of the language of Diplomatic Protocol in English at the Faculty of International Relations (YSU). It presents several types of exercises which can contribute to the easier understanding and learning typical vocabulary concerning diplomatic protocol. Various types of exercises described in the paper provide the students not only with valuable information, but also help them learn new words and expressions in the field of diplomatic protocol.